Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«-2-» օգոստոսի 2021 թ. թիվ 158 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Սույն ընթացակարգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական աշխատողի ատեստավորում անցկացնելու կանոնակարգին համապատասխան:

2. Գիտական աշխատողների որակավորումն անցկացվում է 5 տարին մեկ անգամ: Որակավորման ժամանակացույցը սահմանվում է Կենտրոնի տնօրենի հրամանով, և որակավորվող գիտական աշխատողները դրա մասին տեղեկացվում են որակավորում անցկացնելուց մեկ ամիս առաջ:

3. Որակավորվող գիտական աշխատողների ցուցակը և որակավորման համար ներկայացվող փաստաթղթերի ձևերի փաթեթը հաստատում է Կենտրոնի գիտական խորհուրդը (Հավելված 1, Ձև 1-7):

4. Գիտական աշխատողների որակավորումն անցկացնելու համար Կենտրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է 5-7 առաջատար գիտական աշխատողներից բաղկացած որակավորող հանձնաժողով: Նույն հրամանով ինստիտուտի տնօրենը հանձնաժողովի անդամներից նշանակում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

5. Որակավորման գործընթացից 15 օր առաջ հանձնաժողովին է ներկայացվում

- որակավորվող գիտական աշխատողի մասին ստորաբաժանման ղեկավարի կարծիքը,
- նախորդ որակավորումից հետո անցած ժամանակահատվածի գիտական աշխատանքների, հեղինակային վկայագրերի ցանկերը և գիտական գործունեությանը վերաբերող այլ փաստական նյութեր. ցանկերը պետք է ընդգրկեն՝
  - մենագրությունները,
  - մենագրություններում հեղինակած բաժինները (գլուխները),
  - ՀՀ գիտական ամսագրերում և պարբերականներում հրատարակված հոդվածները,
  - արտերկրի գիտական ամսագրերում և պարբերականներում հրատարակված հոդվածները (նշելով ամսագրի վարկանիշային ցուցանիշը),
  - գիտական ժողովածուներում հրատարակված հոդվածները,
  - գրանցված էլեկտրոնային հրատարակություններում հրապարակված հոդվածները,

- վերջին որակավորմանը հաջորդող ժամանակահատվածում բազային ֆինանսավորմամբ կատարած ծրագրում մասնակցության ձևը և կարգավիճակը, կատարած կամ ընթացիկ գիտահետազոտական աշխատանքները՝ թեմայի/ների վերնագիրը,
- վերջին որակավորմանը հաջորդող ժամանակահատվածում թեմատիկ, նպատակային ֆինանսավորմամբ կատարած գիտահետազոտական աշխատանքները՝ մասնակցության ձևը և կարգավիճակը, թեմայի/ների վերնագիրը:
- դրամաշնորհների, գիտական պայմանագրերի կամ համաձայնագրերի ցուցակը, որոնց մասնակցել է որակավորվողը՝ նշելով կարգավիճակը և կատարած աշխատանքը:
- միջազգային գիտական ծրագրերում մասնակցության մասին տվյալները՝ նշելով կարգավիճակը և կատարած աշխատանքը,
- գիտական նստաշրջաններին և այլ միջոցառումներին մասնակցության մասին տվյալները՝ նշելով միջոցառման կարգավիճակը (միջազգային, հանրապետական, տեղական), մասնակցության ձևը (կազմակերպող, կազմկոմիտեի անդամ, հրավիրված զեկուցող և այլն), զեկուցման վերնագիրը, զեկուցման թեզի հրատարակության դեպքում՝ հրատարակված թեզը,
- ստացած արտոնագրերի և հեղինակային իրավունքների փաստաթղթերը,
- գիտամանկավարժական գործունեության մասին տվյալները՝ նշելով բուհը, ֆակուլտետը, ամբիոնը, կարգավիճակը, դասընթացի անվանումը,
- ասպիրանտի, հայցորդի ղեկավարման մասին տվյալները՝ նշելով ասպիրանտի, հայցորդի անուն ազգանունը, թեման, ղեկավարելու տարիները,
- գիտական և գիտամանկավարժական գործունեության համար ստացած պարգևները,
- գիտական հրատարակությունների խմբագրական կազմին, խորհրդին մասնակցությունը, խմբագրած գրքերը, գիտական ժողովածուները և այլ տվյալներ,
- գիտական խորհուրդներին մասնակցությանը վերաբերող տվյալները,
- պետական կառավարման մարմինների համար փորձաքննական, վերլուծական նյութերին և առաջարկներին վերաբերող տվյալները, գիտական աշխատանքների կարծիքներ, գրախոսություններ:

Հանձնաժողովն իրավասու է որակավորում անցկացնելու, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների 2/3-ը:

Որոշումն ընդունվում է փակ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայները հավասար բաշխվելու դեպքում որոշումն ընդունվում է որակավորվողի օգտին:

Հանձնաժողովը որակավորվողին տալիս է «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին», « Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» գնահատականներից մեկը: Հանձնաժողովը կարող է տալ նաև գիտական աշխատողի պաշտոնը բարձրաց-

նելու կամ իջեցնելու, պաշտոնից ազատելու, պաշտոնական դրույքաչափը բարձրացնելու, իջեցնելու կամ հավելավճար սահմանելու մասին երաշխավորություններ:
Հանձնաժողովի նիստին պարտադիր է որակավորվողի անմիջական ղեկավարի ներկայությունը:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն ու հանձնաժողովի երաշխավորությունները գրանցվում են նիստի արձանագրության մեջ և որակավորման թերթիկում, որոնք ստորագրում են նախագահը և տվյալ նիստին ներկա բոլոր անդամները:

Որակավորման հանձնաժողովի անդամի որակավորման դեպքում հանձնաժողովը որոշումն ընդունում է առանց նրա ներկայության՝ ընդհանուր կարգով:

Որակավորման արդյունքներն ու հանձնաժողովի երաշխավորությունները հանձնաժողովի նիստից հետո՝ 5 օրվա ընթացքում, ներկայացվում են Կենտրոնի տնօրենին և գիտական աշխատողի պաշտոնը բարձրացնելու կամ իջեցնելու, պաշտոնից ազատելու, պաշտոնական դրույքաչափը բարձրացնելու կամ իջեցնելու և հավելավճար սահմանելու հիմք են:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գիտական աշխատողի որակավորումը գնահատելու չափանիշներն այն պահանջներն են, որոնք ներկայացվում են տվյալ տարակարգը հայցող գիտական աշխատողին: Որակավորումը գնահատելու չափանիշները սահմանելիս հաշվի են առնվում նաև տվյալ գիտական աշխատողի տարակարգին համապատասխանող պաշտոնեական պարտականությունները, գնահատման ցուցանիշներն ու չափանիշները:

Գլխավոր գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել՝

ա. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամները.

բ. գիտությունների դոկտորի աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները, որոնք ղեկավարում են գիտական ուղղություն և (կամ) ստեղծել են գիտական դպրոց և ունեն առնվազն 15 տարվա գիտական աշխատանքի ստաժ:

Գլխավոր գիտական աշխատողը պետք է ղեկավարի (կամ մասնակցի) կարևորագույն նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ (մշակումներ, նախագծեր), այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրեր, առաջադրի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) նոր ուղղություններ, որոշի դրանք իրականացնելու ուղիներն ու միջոցները, ընդհանրացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքները, որոշի դրանք օգտագործելու ոլորտները, համակարգի այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող գիտական աշխատանքները, գիտական կադրեր պատրաստի և կատարի վերարտակավորելու աշխատանքներ:

Որակավորմանը նախորդող 5 տարիների համար գլխավոր գիտական աշխատողի գործունեությունը գնահատելու չափանիշների նվազագույն շեմը.

- 10-ից ոչ պակաս հրատարակած աշխատություններ
- ներհայաստանյան, օտարերկրյա կամ միջազգային դրամաշնորհային կամ պայմանագրային ֆինանսավորմամբ կատարվող առնվազն մեկ գիտահետազոտական ծրագրի ղեկավարում կամ մասնակցություն,
- միջազգային և հանրապետական առնվազն երեք գիտաժողովի մասնակցություն՝ զեկուցումներով:

Առաջատար գիտական աշխատողի պաշտոն կարող են զբաղեցնել՝

ա. գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները.

բ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները, որոնք ունեն առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ, տվյալ մասնագիտությամբ արժեքավոր գիտական աշխատանքներ, կարևոր նախագծեր և մշակումներ:

Առաջատար գիտական աշխատողը պետք է մասնակցի առանձին թեմաների և առաջադրանքների շրջանակում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), ղեկավարի այդ հետազոտությունները (մշակումներ, նախագծեր) կատարող աշխատանքային խումբ կամ այլ գիտական կառուցվածքային ստորաբաժանում, հիմնավորի նոր հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) ուղղությունները և դրանք իրականացնելու եղանակները, մշակի աշխատանքային ծրագրեր, ընդհանրացնի հետազոտությունների արդյունքները, որոշի դրանք օգտագործելու ոլորտները, մասնակցի գիտական կադրեր պատրաստելուն և նրանց որակավորման մակարդակը բարձրացնելուն:

Որակավորմանը նախորդող 5 տարիների համար առաջատար գիտական աշխատողի գործունեությունը գնահատելու չափանիշների նվազագույն շեմը.

- 7-ից ոչ պակաս հրատարակած աշխատություններ

Ավագ գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա. գիտությունների դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտնականները,

բ. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտնականները:

Ավագ գիտական աշխատողը պետք է մասնակցի գիտական թեմայի շրջանակում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր) և աշխատանքային խմբի կամ առանձին հետազոտությունների գիտական ղեկավարմանը, կազմակերպի գիտական թեմայի շրջանակում գիտական տեղեկություններ մշակելու և վերլուծելու աշխատանքները, իրականացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքները վերլուծելու և ընդհանրացնելու աշխատանքներ:

Որակավորմանը նախորդող 5 տարիների համար ավագ գիտական աշխատողի գործունեությունը գնահատելու չափանիշների նվազագույն շեմը.

- 5-ից ոչ պակաս հրատարակած աշխատություններ

Գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները,

բ. մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում և առնվազն 5 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող մասնագետները, որոնք գիտական աշխատանքների կամ գյուտերի հեղինակ են:

Գիտական աշխատողը պետք է մասնակցի գիտական թեմայի շրջանակում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), գիտական տեղեկություններն ու հետազոտության արդյունքները մշակելու, վերլուծելու և ընդհանրացնելու աշխատանքներին:

Որակավորմանը նախորդող 5 տարիների համար գիտական աշխատողի գործունեությունը գնահատելու չափանիշների նվազագույն շեմը.

- 3-ից ոչ պակաս հրատարակած աշխատություններ

Կրտսեր գիտական աշխատողի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

ա. գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները,

բ. մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Կրտսեր գիտական աշխատողը պետք է մասնակցի գիտական թեմայի շրջանակում կատարվող առանձին հետազոտությունների (մշակումներ, նախագծեր)՝ պատասխանատու կատարողի ղեկավարությամբ, կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկությունների ուսումնասիրություն:

Որակավորմանը նախորդող 5 տարիների համար կրտսեր գիտական աշխատողի գործունեությունը գնահատելու չափանիշների նվազագույն շեմը.

- 2-ից ոչ պակաս հրատարակած աշխատություններ

Ավագ լաբորանտի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

Մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Ավագ լաբորանտը պետք է մասնակցի բաժնի աշխատանքներին, կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկությունների ուսումնասիրություն, ըստ անհրաժեշտության՝ բաժնի հանձնարարությունները:

Լաբորանտի պաշտոնը կարող են զբաղեցնել՝

Մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Լաբորանտը պետք է մասնակցի բաժնի աշխատանքներին, կատարի առկա նյութերը հավաքագրելու, համակարգչային ձևավորման աշխատանքներ:

Հավելված 1

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական
խորհրդի 2021 թ. օգոստոսի 2-ի որոշմամբ ընդունված գիտական աշխատողի
ատեստավորում անցկացնելու կանոնակարգի

ՏԵՂԵԿԱՆՔ
գիտական աշխատողի 2016- 2021 թվականների գիտական գործունեության արդյունքներն արտացոլող, որակավորման հանձնաժողովին հանձնված փաստաթղթերի վերաբերյալ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

ստորաբաժանումը _____

գիտական պաշտոնը _____

գիտ. աստիճանը և կոչումը (պաշտպան. տարին) _____

Գիտական աշխատողի կողմից կատարվող ուսումնասիրության թեմատիկան.
_____

1. Գիտական աշխատանքների ցանկն ըստ ձև 1-ի (կցվում է):
2. Գիտական աշխատողի մասնակցությամբ (նշելով կարգավիճակը՝ ղեկավար, կատարող) կատարված/ընթացքի մեջ գտնվող դրամաշնորհների, պայմանագրերի, համաձայնագրերի ցանկն ըստ ձև 2-ի (կցվում է) :
3. Գիտական աշխատողի մասնակցությամբ գիտական միջոցառումների ցանկն ըստ ձև 3-ի (կցվում է):
4. Տվյալներ գիտական միջոցառումների կազմակերպման աշխատանքներին մասնակցության մասին ըստ ձև 4-ի (կցվում է):
5. Գիտական ամսագրերի, պարբերականների խմբագրական խորհուրդներին, խմբագրակազմին մասնակցության, գրքերի, գիտական ժողովածուների խմբագրման մասին ըստ ձև 5-ի (կցվում է) :
6. Տվյալներ գիտական, փորձագիտական և գիտամեթոդական խորհուրդներին, գիտական հաստատություններին պատվավոր անդամի կարգավիճակով անդամակցության մասին ըստ ձև 6-ի (կցվում է):
7. Տվյալներ պետական կառավարման մարմինների պատվերով կամ հանձնարարականով կատարված փորձաքնության, վերլուծական աշխատանքների, ծրագրերի մշակումների, առաջարկների և գիտական աշխատանքների, ատենախոսությունների, մագիստրական թեզերի գրախոսությունների վերաբերյալ պետական կառավարման մարմինների պատվերով կամ հանձնարարականով կատարված փորձաքննության, վերլուծական աշխատանքների, ծրագրերի մշակումների, առաջարկների, գիտական աշխատանքների, ատենախոսությունների, մագիստրական թեզերի գրախոսությունների վերաբերյալ ըստ ձև 7-ի (կցվում է):

1-7 կետերով պահանջվող տվյալներին վերաբերվող փաստաթղթերը հանձնեցի՝

Գիտական աշխատողի ստորագրությունը, օր,ամիս, տարեթիվ

1-7 ձևերը լրացված են պահանջներին համապատասխան և հանձնված են որակավորման

Որակավորման հանձնաժողովի քարտուղարի ստորագրությունը, օր,ամիս, տարեթիվ

հանձնաժողովին՝

Լրացնում և հանձնում է որակավորվողը:

Ձև 1

Գիտական աշխատողի 2016-2021 թթ. հրատարակած աշխատությունների ցանկ

Ազգանուն, անուն, հայրանուն_____
Ստորաբաժանումը_____

	քանակը
1. Հրատարակված աշխատությունների քանակը, այդ թվում	
1.1. մենագրություններ ՀՀ/արտերկիր	
1.2. մենագրություններում հեղինակած բաժիններ, գլուխներ ՀՀ/արտերկիր	
1.3. գիտական ամսագրերում և պարբերականներում հրատարակած հոդվածներ ՀՀ/արտերկիր	
1.4. գիտական ժողովածուներում հրատարակած հոդվածները ՀՀ/արտերկիր	
1.5. գրանցված էլեկտրոնային ամսագրերում հրատարակած հոդվածները	
1.6. ստացած արտոնագրեր	
1.7. գիտահանրամատչելի հրատարակություններ	

2. Հրատարակած աշխատությունները

1.1 մենագրություններ
….
….
1.2. մենագրություններում հեղինակած բաժիններ, գլուխներ
….
….
1.3. գիտական ամսագրերում և պարբերականներում հրատարակած հոդվածներ
….
….
1.4. գիտական ժողովածուներում հրատարակած հոդվածներ
….
….
1.5. գրանցված էլեկտրոնային ամսագրերում հրատարակած հոդվածներ
….
….
1.6 Արտոնագրեր
….

….

1.7. Այլ հրատարակություններ

….

….

(գիտաշխատողի պաշտոնը	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
(ստորաբաժանման ղեկավար)	(ստորագրություն)	(ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 2

Դրամաշնորհներով, համաձայնագրերով, պայմանագրերով, միջազգային ծրագրերով 2016-2021 թթ. գիտական աշխատողների կատարած հետազոտությունների ցանկ

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

Դրամաշնորհի ծածկագիրը, համարը, համաձայնագրի, պայմանագրի համարը, կողմերը	Թեման, պայմանագրի, համաձայնագրի առարկան, վերնագիրը	Դրամաշնորհի, պայմանագրի, համաձայնագրի գործողության ժամկետը	Գիտական աշխատողի կարգավիճակը (ղեկավար, կատարող)	Տվյալներ արդյունքների վերաբերյալ
1. դրամաշնորհներ				
….				
….				
2. պայմանագրեր, համաձայնագրեր				
….				
….				

_____ _____ _____
(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____
(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 3

ՏՎՅԱԼՆԵՐ
գիտական նստաշրջանների և գիտական այլ միջոցառումների
գիտական աշխատողի մասնակցության վերաբերյալ
(2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

Գիտական միջոցառման տեսակը[1], խորագիրը	Զեկուցման Կարգավիճակը[2]	Միջոցառման կարգավիճակը[3]	Զեկուցման վերնագիրը	Միջոցառման ժամկետները

1. Համաժողով, գիտաժողով, սիմպոզիում, սեմինար և այլն:
2. Պլենար, հրավիրված, սեկցիոն, ստենդ և այլն:
3. Միջազգային, հանրապետական, ներինստիտուտային:

_____ _____ _____
(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____
(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 4

ՏՎՅԱԼՆԵՐ
գիտական նստաշրջաններ և գիտական այլ միջոցառումներ կազմակերպելու աշխատանքներին գիտական աշխատողի մասնակցության վերաբերյալ
(2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

Գիտական միջոցառման տեսակը[1], խորագիրը	Միջոցառման վայրը, ժամկետները	Գիտական միջոառման **նախապատրաստմանը** մասնակցության ձևը[2]	Գիտական միջոցառման **անցկացմանը** մասնակցության ձևը[2]

1. Համաժողով, գիտաժողով, սիմպոզիում, սեմինար և այլն:
2. Կազմկոմիտեի նախագահ, պատասխանատու, անդամ և այլն:

_____ _____ _____
(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____
(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 5

ՏՎՅԱԼՆԵՐ

Գիտական ամսագրերի, պարբերականների խմբագրական խորհուրդների, խմբագրակազմի մասնակցության, գրքերի, գիտական ժողովածուների խմբագրման մասին (2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

h/h	Ամսագրի, պարբերականի, մենագրության, հոդվածների ժողովածուի անվանումը, վերնագիրը	Խմբագրական աշխատանքներին մասնակցության ձևը

_____ _____ _____

(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____

(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 6

ՏՎՅԱԼՆԵՐ

Գիտական, փորձագիտական և գիտամեթոդական խորհուրդների, գիտական հաստատություններին պատվավոր անդամի կարգավիճակով անդամակցության մասին (2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

Հաստատությունը	Խորհրդի անունը	ժամկետը

_____ _____ _____

(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____

(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :

Ձև 7

ՏՎՅԱԼՆԵՐ

Պետական կառավարման մարմինների պատվերով կամ հանձնարարականով կատարված փորձաքնության, վերլուծական աշխատանքների, ծրագրերի մշակումների, առաջարկների և գիտական աշխատանքների, ատենախոսությունների վերաբերյալ (2016-2021 թթ.)

Ազգանուն, անուն, հայրանուն_____

Ստորաբաժանումը_____

ատարված աշխատանքի տեսակը	Պատվիրատուն, հանձնարարողը	ժամկետը
1. փորձաքննություն		
….		
2. վերլուծական		
….		
3. Ծրագիր, առաջարկ		
….		
4. Գրքի գրախոսություն		
….		
5. Հոդվածի գրախոսություն		
….		
6. Ատենախոսության գրախոսություն		
….		
7.Մագիստրոսական թեզի գրախոսություն		

_____ _____ _____

(գիտաշխատողի պաշտոնը (ստորագրություն) (ա.ա.հ.)

_____ _____ _____

(ստորաբաժանման ղեկավար) (ստորագրություն) (ա.ա.հ.)

Լրացնում և հանձնում է որակավորվողը :